

ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ԴԻՎԱՆԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ Ս/Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 24-Ի ԸՆԴԼԱՅՆՎԱԾ ՆԻՍՏԻ ՄԱՍԻՆ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհուրդը Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա.-ի նախագահությամբ գումարված իր սույն թվի 24 սեպտեմբերի ընդլայնված նիստում, որին մասնակցում էին ներքին թեմերի թեմական առաջնորդներ Տ. Նարեկ եպս. Շաքարյանը, Տ. Գևորգ եպս. Սերայդարյանը, Տ. Անանիա եպս. Արաբաջյանը և արտասահմանից ժամանած արքեպիսկոպոսներ, հանձինս Տ. Տիրան Արք. Ներսոյանի, Տ. Վաչե Արք. Հովսեփյանի, Տ. Զավեն Արք. Չինչինյանի, Տ. Տիրայր Արք. Մարտիկյանի, Տ. Արսեն եպս. Բերբերյանի, Տ. Գրիգորիս եպս. Բունիաթյանի, Տ. Մեսրոպ եպս. Գրիգորյանի, ի գլուխ ունենալով Կ. Պոլսի ամենապատիվ Տ. Շնորհք Պատրիարք Գալուստյանը, ծանոթացան՝ Մեծի Տանն Կիլիկիո պատվիրակների անցյալ հուլիս ամսին Մայր Աթոռ ներկայացրած տեսակետներին, որով նրանք հայտնում էին, թե մեր Եկեղեցին կարիք չունի ներկայիս մի կպվմական կանոնադրություն ունենալու և թե նրա «պատրաստությունը ոչ այժմեական է, ոչ կարելի և ոչ էլ օգտակար»:

ա. Գերագույն Հոգևոր Խորհուրդը և ժողովին մասնակից բարձրաստիճան հոգևորականները բարձր գնահատեցին կանոնադրության Հանձնաժողովի կատարած աշխատանքը և, հետ մտքերի լայն փոխանակության, եկան այն եզրակացության, որ Տանն Կիլիկիո Աթոռի սույն տեսակետը հիմնավորված չէ և որ անհրաժեշտ է շարունակել սկսված գործը՝ իր ընդունելի վերջնական ձևին հասցնելու համար կանոնադրության նախագիծը, որտեղ ընդհանուր գծերի մեջ ճշտված պետք է լինեն Հայ Եկեղեցու կպվմական կառույցը, կանոնական հիմնական սկզբունքները, նվիրապետական Աթոռների իրավասությանց սահմանները և թեմական ու համայնքային կպվմակերպությանց ժողովրդավարական և ժողովական ղեկավարման կարգը, հոգևոր դասի և աշխարհական դասի ներկայացուցիչների համերաշխ ու հավասար գործակցությամբ:

Հայ Առաքելական Եկեղեցին օժտել մի կպվմական կանոնադրությամբ՝ նշանակում է ոչ միայն արտահայտել ու ամրապնդել մեր Եկեղեցու կառույցի կանոնական միությունը, այլ նաև սփյուռքի մեր եկեղեցական կյանքից վերացնել այն անբնականոն ու տագնապալի կացությունը, որ ահա գոյատևում է մոտ երեսուն տարիներից ի վեր: Նման մի կանոնադրության մշակում և գործադրում կնշանակի նաև ամուր միասնություն ստեղծել մայր հայրենիքի և սփյուռքի հայ հավատացյալ ժողովրդի կյանքում եկեղեցական կյանքի մակարդակի վրա:

Անհրաժեշտ է նման մի կանոնադրությամբ իրականացնել Հայ Եկեղեցու միությունը և հայ հավատացյալ ժողովրդի հոգևոր միասնությունը, Սուրբ Էջմիածնի օրհնության ներքո և եղբայրական գործակցությամբը Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսական Աթոռի ու Երուսաղեմի և Կ. Պոլսի Պատրիարքությանց Աթոռների:

բ. Ժողովի մասնակիցները ծանոթացան նաև Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա.-ի վերջին տարիների խաղաղասիրական գործունեությանը և հատկապես Ամերիկայի Միացյալ Նահանգաց մեծահարգ նախագահին ուղղյալ 24 հուլիս 1986 թվակիր նամակի բովանդակությանը, ինչպես նաև Լիբանանի հայությանը ուղղյալ 4 հունիս 1986 թվակիր օրհնության խոսքին, ջերմորեն ողջունելով Վեհափառ Հայրապետի աստվածահաճո մշտական ճիգերը, նրա կենդանի խոսքը, նրա մարդասիրական կոչերը՝ վասն խաղաղության աշխարհի, վասն սպառազինությունների դադարեցման, ընդհանուր պինաթափման և վասն համերաշխ գործակցության մեր երկրագնդի մեծ ու փոքր ազգությունների, արդարության լույսի ներքև:

Ժողովին մասնակցող եկեղեցական հայրերը, ներշնչված մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի Ավետարանի պատգամներից և առաջնորդված մեր ժողովրդի ու մայր երկրի գերագույն շահերից, իրենց հայ եկեղեցականի պարտքն են նկատում իրենց աշխատանքի վայրում բարձր հնչեցնել խաղաղության ձայնը խաղաղասեր եկեղեցիների և կանգվածների կողքին, համոզված, որ Հայ Եկեղեցու և հայ հոգևորականության կոչումն իսկ է իրենց նպաստը բերել խաղաղ ու արդար մի աշխարհի ստեղծման առանց հրի և սրի, առանց պատերազմների և առանց ցեղասպանությունների:

Ժողովականները արտահայտեցին նաև իրենց ջերմ մաղթանքը, որ խաղաղության արեգակը վերստին ճառագայթի Միջին Արևելքի երկրներում, հատկապես Լիբանանյան սուրբգրական երկրում, որպեսզի վերահաստատվի այնտեղ երբեմնի բարգավաճ ու ծաղկյալ կյանքը համերաշխ գործակցությամբ բոլոր համայնքների:

Զի մեր հայրերի Աստվածը խաղաղության Աստված է, իսկ մեր Ավետարանը՝ ի մարդիկ հաճության և համերաշխության Ավետարան:

«Ապա այսուհետև վիճեալ երթիցուք վիճաղաղութեան և վշինութեան որ առ միմեանս» (Հռոմ, ԺԴ 19): Ամեն:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Ս. Էջմիածին,
29 սեպտեմբեր 1986 թ.



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ, ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐԸ
ԵՎ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՆՈՐԸՆՏԻՐ ԱՆԴԱՄՆԵՐԸ
ՎԵՀԱՐԱՆԻ ՇՔԱՄՈՒՏՔԻ ԱՌՋԵՎ